Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Պ-**735**-16.09.2020-ՊԻ-011

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ»ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» 2018 թվականի փետրվարի 7-ի ՀՕ-95-Ն սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) 132-րդ հոդվածի 6-րդ մասում «իրավագիտության դոկտորի գիտական աստիճանի» բառերը փոխարինել «իրավագիտության բնագավառում գիտական աստիճանի» բառերով:

Հոդված 2. Օրենքի 134-րդ հոդվածում՝

1) 1-ին մասից հանել «տվյալ դատարանում» բառերը.

2) 2-րդ մասում «Վճռաբեկ դատարանում դատավորի» բառերը փոխարինել «Դատավորի» բառով, իսկ «նախատեսված ցուցակը կազմելիս դատավորի» բառերից հետո «Վճռաբեկ դատարանում» բառերը հանել:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Տեղեկանք Պ-**735**-16.09.2020-ՊԻ-011/1

Լրամշակված նախագիծ

Երկրորդ ընթերցում

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ~~ԵՎ ԼՐԱՑՈՒՄ~~ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» 2018 թվականի փետրվարի 7-ի ՀՕ-95-Ն սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) –132-րդ

հոդվածի 6-րդ մասում «իրավագիտության դոկտորի գիտական աստիճանի» բառերը փոխարինել «իրավագիտության բնագավառում գիտական աստիճանի» բառերով:

~~134-րդ հոդվածում՝~~

~~1.) 1-ին մասից հանել «տվյալ դատարանում» բառերը.~~

~~2). 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:~~

Հոդված 2. Օրենքի 134-րդ հոդվածում՝

1) 1-ին մասից հանել «տվյալ դատարանում» բառերը.

2) 2-րդ մասում «Վճռաբեկ դատարանում դատավորի» բառերը փոխարինել «Դատավորի» բառով, իսկ «նախատեսված ցուցակը կազմելիս դատավորի» բառերից հետո «Վճռաբեկ դատարանում » ~~ուժը կորցրած ճանաչել:~~ բառերը հանել:

Հոդված 3~~2~~. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ԿՈԴ՝ Պ-735-16.09.2020-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՆԱԽԱԳԾԻ ԱՅՆ ՄԱՍԸ, ՈՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵԿՈՒՑՈՂԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ
1.	**Կառավարություն**	Նախագծի 1-ին հոդված	1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «**Հոդված 1**. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» 2018 թվականի փետրվարի 7-ի ՀՕ-95-Ն սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) 132-րդ հոդվածի 6-րդ մասում «իրավագիտության դոկտորի գիտական աստիճանի» բառերը փոխարինել «իրավագիտության բնագավառում գիտական աստիճանի» բառերով:	Ընդունվել է՝ կատարվել է փոփոխություն:	Ընդունվել է:
2.		Նախագծի 2-րդ հոդված	2-րդ հոդվածով շարադրել Օրենքի 134-րդ հոդվածի փոփոխությունները և 134-րդ հոդվածի 2-րդ մասը ոչ թե ուժը կորցրած ճանաչել, այլ 2-րդ մասում «Վճռաբեկ դատարանում	Ընդունվել է՝ կատարվել է փոփոխություն:	Ընդունվել է:

			դատավորի» բառերը փոխարինել «Դատավորի» բառով, իսկ «նախատեսված ցուցակը կազմելիս դատավորի» բառերից հետո «Վճռաբեկ դատարանում» բառերը հանել:		
3.	**Պատգամավոր Վլադիմիր Վարդանյան,**	Նախագիծ	Նախագծում կատարվել են տեխնիկական փոփոխություններ:	Ընդունվել է՝ կատարվել է փոփոխություն:	Ընդունվել է:
4	**Պատգամավոր Վլադիմիր Վարդանյան,**	Նախագիծ	Նախագծի վերնագրում «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ» բառը փոխարինել «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ» բառով, «ԵՎ ԼՐԱՑՈՒՄ» բառերը հանել:	Ընդունվել է՝ կատարվել է փոփոխություն:	Ընդունվել է: